ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/4

ք. Երևան «19» 02 2020թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տիգրան Գալստյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայր և Որդի Երեմյաններ» ՍՊԸ-ն ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Երեմյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պաշտոնական պատվիրակության ընդունելության համար հյուրասիրության ծառայությունների (այսուհետ՝ ծառայություն)՝ մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 5000000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է փաստացի մատուցված ծառայության՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական

միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են 2020 թվականի հունվարի 19-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել

է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ **ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19** **ՀՎՀՀ 00008519** **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** **Հ/Հ 900011020089** **ՀՀ ԱԺ աշխատակազմի** **ղեկավար – գլխավոր քարտուղար՝** **Տ. Գալստյան**	**«Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ** Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ 2470063177280110 ՀՎՀՀ 01557735 Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Եր.Քոչարի 27,բն.25 ***Գլխավոր տնօրեն՝ Դավիթ Երեմյան***
_____ (ստորագրություն) Հ.Տ.	_____ (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«19» 02 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ծավալը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79111200/1	**«ԼԱՎԱՇ»**Պատվիրակության անդամների համար կազմակերպվելիք պաշտոնական հյուրասիրությունը պետք է ներառի 1. Սառը խորտիկներ, 2. Աղցաններ, 3. Տաք խորտիկներ, 4. Ապուրներ, 5. Տաք ուտեստներ, 6. Խավարտներ, 7. Ալկոհոլային խմիչքներ, 8. Կոկտեյլներ, 9. Տաք ըմպելիքներ, 10. Զովացուցիչ ըմպելիքներ (նաև բնական), 11. Աղանդեր (խմորեղեն), 12. Միրգ:	դրամ	463340	1	Ըստ Հավելված 1.1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2020թ.
2		**«ՇԵՐԵՓ»**Պատվիրակության անդամների համար կազմակերպվելիք պաշտոնական հյուրասիրությունը պետք է ներառի 1. Սառը խորտիկներ, 2. Աղցաններ, 3. Տաք խորտիկներ, 4. Ապուրներ, 5. Տաք ուտեստներ, 6. Խավարտներ, 7. Ալկոհոլային խմիչքներ, 8. Կոկտեյլներ, 9. Տաք ըմպելիքներ, 10. Զովացուցիչ ըմպելիքներ (նաևբնական), 11. Աղանդեր (խմորեղեն), 12. Միրգ:	Դրամ	391820	1		

3	79111200/1	**«ԳԵՏԱՓ»**Պատվիրակության անդամների համար կազմակերպվելիք պաշտոնական հյուրասիրությունը պետք է ներառի 1. Սառը խորտիկներ, 2. Աղցաններ, 3. Տաք խորտիկներ, 4. Ապուրներ, 5. Տաք ուտեստներ, 6. Խավարտներ, 7. Ալկոհոլային խմիչքներ, 8. Կոկտեյլներ, 9. Տաք ըմպելիքներ, 10. Զովացուցիչ ըմպելիքներ (նաև բնական), 11. Աղանդներ (խմորեղեն), 12. Միրգ:	Դրամ	417020	1	Ըստ Հավելված 1.1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2020թ.
4		**«ՊԱՆԴՈԿ ԵՐԵՎԱՆ»**Պատվիրակության անդամների համար կազմակերպվելիք պաշտոնական հյուրասիրությունը պետք է ներառի 1. Սառը խորտիկներ, 2. Աղցաններ, 3. Տաք խորտիկներ, 4. Ապուրներ, 5. Տաք ուտեստներ, 6. Խավարտներ, 7. Ալկոհոլային խմիչքներ, 8. Կոկտեյլներ, 9. Տաք ըմպելիքներ, 10. Զովացուցիչ ըմպելիքներ (նաևբնական), 11. Աղանդներ (խմորեղեն), 12. Միրգ:	Դրամ	466380	1		
5		**«Սմոքինգ Շեֆ»**Պատվիրակության անդամների համար կազմակերպվելիք պաշտոնական հյուրասիրությունը պետք է ներառի 1. Սառը խորտիկներ, 2. Աղցաններ, 3. Տաք խորտիկներ, 4. Ապուրներ, 5. Տաք ուտեստներ, 6. Խավարտներ, 7. Ալկոհոլային խմիչքներ, 8. Կոկտեյլներ, 9. Տաք ըմպելիքներ, 10. Զովացուցիչ ըմպելիքներ (նաև բնական), 11. Աղանդներ (խմորեղեն), 12. Միրգ:	Դրամ	370210	1		

6	79111200/1	**«Լիվինգսթոն»**Պատվիրակության անդամների համար կազմակերպվելիք պաշտոնական հյուրասիրությունը պետք է ներառի 1. Սառը խորտիկներ, 2. Աղցաններ, 3. Տաք խորտիկներ, 4. Ապուրներ, 5. Տաք ուտեստներ, 6. Խավարտներ, 7. Ալկոհոլային խմիչքներ, 8. Կոկտեյլներ, 9. Տաք ըմպելիքներ, 10. Զովացուցիչ ըմպելիքներ (նաև բնական), 11. Աղանդներ (խմորեղեն), 12. Միրգ:	դրամ	420750	1	Ըստ Հավելված 1.1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2020թ.
Մասնակիցը գնային առաջարկին կից պետք է ներկայացնի իր կողմից հաստատված ընդհանուր մենյուն՝ ըստ առավելագույն գների: Վերջնական պատվերը համաձայնեցվում է պատվիրատուի հետ:							

**Կից ներկայացված գնացուցակը հանդիսանում է Պայմանագրի Հավելված 1-ի անբաժանելի մասը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Աժ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ Աժ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Տ. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470063177280110
ՀՎՀՀ 01557735
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Եր.Քոչարի 27,բն.25
Գլխավոր տնօրեն՝ Դավիթ Երեմյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
« 19 » 02 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԵՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ԳՆԱՑՈՒՑԱԿ
«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ԵՐԵՄՅԱՆՆԵՐ» ՍՊԸ

ՀՀ դրամ

1. ՍԱՌԸ ԽՈՐՏԻԿՆԵՐ	«ԼԱՎԱՇ» (ք. Երևան, Թումանյան 21, 22 տարածք)	«ՇԵՐԵՓ» (ք. Երևան, Ամիրյան 1)	«ԳԵՏԱՓ» (ք. Երևան, Իսակովի 48)	«ՊԱՆԴՈԿ ԵՐԵՎԱՆ» (մ/ճ Պարոնյան 7, 58 տարածք մ/ճ Խորենացու 29/2 մ/ճ Ամիրյան 5, 26 տարածք մ/ճ Տերյան 91/1)
Հաց	440	550	440	440
Գյուղական պանիր	2310	3080	1980	1980
Պանրի տեսականի	3080	7150	6600	2860
Մսի տեսականի տնական	5390	6050	5170	4950
Մսի տեսականի	3960		3630	3520
Ձկան տեսականի	9350	9350	9350	8800
Ձկան տեսականի հայկական	8250		8250	7700
Բանջարեղենի տեսականի	3300	3520	2860	2860
Ղավուրմա	4400	4950	3960	4180
Թարմ բանջարեղեն	1980	2200	1320	1980
Թարմ կանաչի	1540	1540	1320	1320
Ձիթապտուղ	1100	1430	990	1100
Կիտրոն	660	660	660	550
Քամած մածուն	1100	1100	880	880
Ռեժան	1100		990	990
Տնական թթու	1540	2200	1320	1320
Ֆիրմային թթու	3080	3300	2860	2860
Ընկույզով պաշտետ	1760			
Մուրաբալ			1320	
Բաբաղանուշ			1650	
Ընդամենը	**54340**	**47080**	**55550**	**48290**
2. ԱՂՑԱՆՆԵՐ				
Աղցան՝ Ամառային	1980	2200	1760	1980
Աղցան՝ Միջօրե	2310	2420	2200	1980
Աղցան՝ Կեսար հավով	2970	3190	2750	2750
Աղցան Կեսար սաղմոնով	4400	4400		3740
Աղցան՝ Ոլորոն	2200	2200		2090
Աղցան Հունական	2750	2860	2640	1980
Աղցան՝ Հայաստան	2420			1980
Աղցան՝ Կովսական	2420			2090
Աղցան՝ Լցոնած սմբուկ	2200		2090	2090
Աղցան՝ Բռոկկոլի սնկով	1980		1760	1650
Աղցան՝ Ավելուկով	1210	1320	1100	1100
Աղցան՝ Ավելուկով մածունով	1430			1320
Աղցան Ասիական	2420			
Աղցան՝ Բաբելոն		4070		
Կապրեզե		4070		

Տորնեդոս ընկույզի սոուսով		3740		
Ավելուկը մսով աղցան			2200	
Հավով ավոկադոյով աղցան			2200	
Բանջարեղենային աղցան ֆետա պանրով			1980	
Ընդամենը	**30690**	**30470**	**20680**	**24750**
3. ԱՊՈՒՐՆԵՐ				
Ավելուկով ապուր	1100	1320	990	990
Բորշչ	1540	1540	1210	1210
Դդումով կարմիր լոբով	1540		1540	1540
Դդումով կրեմ ապուր	1540	1980		1320
Լոբով ապուր	1100		1210	990
Հավով ապուր	1100			1210
Հարիսա	1320		1100	1100
Նռանե	1760	1870		1650
Չանախ	1650		1650	1650
Սիբիրյան	1320	1540		1320
Սնկով կրեմ ապուր(Շերեփ, Լավաշ), սնկով ապուր (Պանդոկ)	1760	1980		
Սոլյանկա	1760	2200	1650	1650
Սպաս(Լավաշ, Գետափ,Պանդոկ),իշլի քյուֆթայով (Շերեփ)	990	2200	880	880
Ընդամենը	**18480**	**14630**	**10230**	**15510**
4. ՏԱՔ ՈՒՏԵՍՏՆԵՐ				
Էրզրումի ղափամա փոքր/մեծ	3960	3960		8800
Թավա քյուֆթա	2860			2860
Թփով/կաղամբով տոլմա	2420	2750	2420	2420
Իշլի քյուֆթա	2970	3080	2860	2530
Հորթի թիակ հաճարի փլավով	27500		28600	28600
Հորթի խաշլամա	3630		3520	3300
Հորթի մատներ կանաչիի սոուսով	4950			
Հորթի մատներ ջեռոցում	6050			6600
Հորթի չալաղաջ արիշտայով	16500			16500
Տապակա խոզի մսով	2530	2860		2200
Տավարի/ Գառան տժվժիկ (Կորատելլա)	2200	2640	2090	1980
Խուրջին գառան մսով	5500		5500	5500
Ճուտ տապակած	2640	2750	2750	2200
Տապակած սունկ կարտոֆիլով	1430		1210	1210
Բարահունջ	7700		8800	6050
Տաք ուտեստ Լավաշ	6600			
Ավան տաք ուտեստ	6600			
Շարան տաք ուտեստ	4400			
Գառան թիակ ֆիրմային բաղադրատոմսով		15400		
Սնկով բեֆստրոգանով		3630		3300
Մեդալյոններ սպանախով		5500		
Օսոբուկո խավարտով		5280		

Թարխունով գառան թիակ			9900	9900
Տավարի մատներ նոր բաղադրատոմսով			28600	
Գառան միս ֆիրմային բաղադրատոմսով				14300
Սպագետի հորթի մսով				1210
Քյուֆթա				2640
Տավարի տժվժիկ				1980
Ղափամա				19800
Գառան վիզ ամբողջական				8250
Ընդամենը	**110440**	**47850**	**96250**	**152130**
5. ԽԱՎԱՐՏՆԵՐ				
Սունկ հաճարով	1650		1430	1320
Արիշտա	1100	1100	1100	990
Բրինձ	880	880	770	660
Ծնեբեկ	7150	7150	3080	3080
Կանաչ լոբի տապակած	1760	1760	1650	1430
Կանաչ ոլոռ	1320	1320	1320	1210
Կարտոֆիլ խյուս	880	880	770	660
Կարտոֆիլ տապակած	1650		1210	1210
Կարտոֆիլ ֆրի	660	880	770	550
Հնդկաձավար	880	880	770	660
Մանդակ/Սիբեխ տապակած	2640	2750	2420	2420
Վայրի բրինձ		2750		
Ընդամենը	**20570**	**20350**	**15290**	**14190**
6. ԽՈՐՈՎԱԾԻ ՏԵՍԱԿԱՆԻ				
Խոզի փափուկ խորոված	3740	3850	3520	3520
Խոզի մատներ խորոված	3960	4180	3740	3740
Խոզի չալաղաջ խորոված	4180	4400	3960	3930
Տավարի սուկի խորոված	4950	4950	4400	4400
Հորթի խորոված	4070	4400	3960	4070
Գառան խորոված	3520	3850	3520	3520
Գառան մատներ	3740	4180	3850	3630
Գառան չալաղաջ	4400	4400	4180	3960
Հավի խորոված	2420	2750	2310	2200
Տավարի մշո քյաբաբ	1760	1650	1540	
Գառան մշո քյաբաբ	1980	1980	1870	
Տավարի քյաբաբ			1320	1210
Հավի քյաբաբ			1100	1100
Բանջարեղեն խորոված	1650	1980	1650	1540
Կարտոֆիլ խորոված	660	660	660	660
Սունկ խորոված	1540	1540	1320	1320
Սոլուգունի խորոված	1540	1540	1430	1430
Էրեբունի	2420	2420	2200	1980
Ընդամենը	**46530**	**48730**	**46530**	**42210**
7. ՁԿՆԵՂԵՆ				
Իշխան գավառական	3960			3960
Իշխան խորոված (հատ/կգ.)	3960	4400	7700	3960
Իշխան շոգեխաշած	3960	4400		3960
Կարմրախայտ ջերմուկի շոգեխաշած	3960	4400	3960	3960
Սիգ խորոված	8800	9350	8250	8800

Թառափ խորոված	11000	11000	11000	9900
Ընդամենը	**35640**	**33550**	**30910**	**34540**
8. ԽԻՆԿԱԼԻ/ԽԱՉԱՊՈՒՐԻ				
Խինկալի խաշած 4հատ	1320	1540		1100
Խինկալի տապակած 4հատ	1540	1760		1320
Մեգրելական խաչապուրի		3080		2640
Աջարական խաչապուրի		1760		1320
Գյուղական խաչապուրի		2200		
Իմերիթական խաչապուրի				2200
Ընդամենը	**2860**	**10340**		**8580**
9. ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐ				
Օղի Աբսալյուտ դասական 0,5լ	9900		10450	
Օղի Ցարսկայա օրգինալնայա 0,5լ	6600	6600	6600	6600
Օղի Օհանյան 0,5լ	9350	9350	9350	9350
Օղի Ֆինլանդիա 0,5լ	9350	9350	9350	9350
Օղի Իջևանի (թութ, խաղող, ծիրան, հոն, վայրի տանձ)	11000	11000	11000	11000
Շամպայն Հայկական			4400	4400
Շամպայն Կարաս	8800	8800	9350	9350
Շամպայն Տակառ	8800	8800	9900	8800
Գինի Իջևան (կարմիր/սպիտակ չոր)	5500	5500	5500	5500
Գինի Կուր (կարմիր/սպիտակ չոր)	9350	9350	9350	9350
Գինի Կատարո (կարմիր չոր)	11000	11000	11000	11000
Գինի Հին Արենի (կարմիր չոր)	6600	6600	6600	6600
Կոնյակ Ախթամար 50գր	2640	2530	2530	2530
Կոնյակ Դվին 50գր	7700	7700	7700	7700
Կոնյակ Ընտիր 50գր	2200	1980	1980	1980
Կոնյակ Մադաթով 7տ, 50գր	1650	1650	1650	1650
Գարեջուր Կիլիկիա, Դիլիջան, Գյումրի լցնովի 0,5լ	880	880	770	770
Ընդամենը	**111320**	**101090**	**117480**	**105930**
10. ԿՈԿՏԵՅԼՆԵՐ				
Անտառային	2970			
Գլինտվեյն	1760	1760		
Մոխիտո	2760	2750	3080	
Ընդամենը	**7490**	**4510**	**3080**	
11. ՏԱՔ ԸՄՊԵԼԻՔՆԵՐ				
Սուրճ Արևելյան	550	550	440	440
Սուրճ Ամերիկանո	1320	1100	1100	1100
Թեյ խոտաբույսերով	550	550	440	440
Թեյ կոճապղպեղով 0,5լ	1430	1430	1430	1430
Ընդամենը	**3850**	**3630**	**3410**	**3410**

12. ՋՈՎԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԻՔՆԵՐ				
Կոմպոտ	1650	1760	1650	1650
Վրաց. Լիմոնադ	770	770	660	660
Ջրեղեն՝ խառը	390	440	390	390
Պեպսի,Միրինդա 7ափ	390	440	390	390
Ընդամենը	**3200**	**3410**	**3090**	**3090**
11. Աղանդներ (խմորեղեն)				
Թոնրի գաթա			1980	1760
Գավառական փախլավա	1320	1540	1320	1320
Գինեսի ռեկորդակիր գաթա	1540		1540	1540
Միլֆեյ	3080			
Բասկյան տորթ	1430			
Կոտրված ծաղկաման		3850		
Շերեփ		3520		
Դելիս ազնվամորիով		2640		
Էսկիմո		3850		
Ընդամենը	**7370**	**15400**	**4840**	**4620**
13. ՄԻՐԳ				
Մրգի տեսականի	8800	8800	7700	7150
Հատապտուղ	1760	1980	1980	1980
Ընդամենը	**10560**	**10780**	**9680**	**9130**
ԱՄԲՈՂՋԸ	**463340**	**391820**	**417020**	**466380**

«Սմոքինգ Շեֆ» (ք. Երևան, Պուշկինի 51շ, 27,30)	ՀՀ դրամ
ՍԱՌԸ ԽՈՐՏԻԿՆԵՐ	
Թարմ թխված ֆոկաչչա, փափուկ սպիտակ հացի ռոլեր, ամբողջական ցորենի տնական հաց և սև հաց	1540
Պանրի ափսե	7150
Մսի ափսե	8250
Պրոշուտտոյով փաթաթված գրիսսինի ձողիկներ	1980
Կրոստինի լոմո	2200
Կրոստինի սաղմոնով	2640
Ընդամենը	**23760**
Աղցաններ	
Աղցան գրիլ հավի կրծքամսով և ավոկադոյով	3520
Սթեյք աղցան	3960
Աղցան ծովախեցգետնով	3960
Քինոայով աղցան	2640

«Լիվինգսթոն» (ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1)	ՀՀ դրամ
Նախուտեստներ	
Բանջարեղենի տեսականի թարթար սոուսով	4950
Մսի տեսականի	9350
Պանրի տեսականի	8690
Ոստրե	7700
Նյուաժ-մածուն	4290
Սև ձկնկիթ	74800
Բիֆ թարթար պարմեզանի կրեմով	4950
Թունայի տատակի յուզու սոուսով	7480
Սաղմոնի կարպաչչո պարմեզանի կրեմով	6930
Ընդամենը	**129140**
Ազցաններ	
Թունայով և ավոկադոյով	9350

Ընդամենը	**14080**
Գրիլ հաուս	
Թռչնամիս	
Գրիլ հավի կրծքամիս՝ հոսպերում պատրաստված կարտոֆիլով	3410
Ընդամենը	**3410**
Տեղական տավարի միս	
Բիֆ անտրեկոտ	17600
Ռիբայ ոսկորով	10450
Տավարի սուկի	5830
Ընդամենը	**33880**
Անգուս	
Պրայմ T-Bone ոսկորով,	17490
Ֆիլե մինյոն (արգենտինական)	17490
Պրայմ Անգուս ռիբայ (ցուլ)	18590
Ընդամենը	**53570**
Գառ	
Գառան անտրեկոտ	13200
Ընդամենը	**13200**
Խոզ	
Խոզի անտրեկոտ	6050
Ընդամենը	**6050**
Ձուկ	
Գրիլ սաղմոնի ֆիլե	7700
Գրիլ իշխանի ֆիլե	5060
Ընդամենը	**12760**
Սենդվիչներ	
Բուրգեր Smoking Chef	2860
Տակո տավարի մսով, ռուկոլայով, սոխի չիպսով, բարբիքյու սոուսով, գուակամոլե սոուսով և քոուլ-սլոու աղցանով	3080
Ընդամենը	**5940**
Տաք ուտեստներ	
Սաղմոն անչոուսի սոուսով	7150
Բադի միս քաղցր չիլի սոուսով	6600
Ռիզոտտո անգուսի մսեղեղով	2750
Իշխանի ֆիլե ռոլ	4620

աղցան	
Մանրածովախեցգետնով աղցան ասիական սոուսով	5390
Սաղմոն գրավլաքս մարգարտե սոխով	4400
Ընդամենը	**19140**
Ապուրներ	
Մածունի ապուր վարունգի սֆերայով	2420
Դդումով կրեմ-ապուր՝ պրոշուտտոյով	2530
Ընդամենը	**4950**
Տաք ուտեստներ	
Գառը նեխուրի պարմանտիեով	8800
Սաղմոնի ֆիլե ծաղկակաղամբի պարմանտիեով	10890
Սև ֆիլե-մինյոն սոխի էսպումայով	8140
Սիգ մյուսլիի էսպումայով	6050
Բադի կոնֆի գետնախնձորի պարմանտիեով	7480
Ընդամենը	**41360**
Գրիլ Հոսպեր	
Թունայի սթեյք	13420
Ծովախեցգետին	11990
Պրայմ Ռիբայ սթեյք	24530
Խոզի չալաղաջ	7150
Ընդամենը	**57090**
Խավարտներ	
Կանաչյան կարտոֆիլ	1430
Վայրի բրինձ	3190
Ծնեբեկ	7480
Ընդամենը	**12100**
Աղանդեր	
Պանա Կոտա ազնվամորու գրանիտեով	8360
Մրգի տեսսկանի	16500
Շոկոլադե սիգարներ	4950
Ընդամենը	**29810**
Ալկոհոլ	
Օղի	
Բելուգա գոլդ 50մլ	9900
Գրեյ Գուս 50մլ	3630

Տալիոլինի ծովախեցգետնով	4620
Ընդամենը	**25740**
Ուտեստներ կիսվելու համար	
Միդիա շաֆրանի ծաղիկով և կուրկումայով	5280
Սաղմոնի թարթար մանգոյով, բազուկով, ավոկադոյով և գետնանուշով	3960
Հորթի սուկիի թարթար սև ձիթապտղի փոշիով, թարթար սոուսով և ռուկոլայով	3520
Անգուսի բրեզաոլան կարպաչչո ոճով՝ ռուկոլայով և պարմեզանով	3960
Ընդամենը	**16720**
Ապուրներ	
Ծովամթերքով ապուր	3190
Ծնեբեկով և բրոկկոլիով կրեմ-ապուր	2640
Սոյա Բիֆ ապուր	2640
Զուպպա դի Ֆունգի կրեմ-ապուր	1540
Մուսկատ դե Պրովանս կրեմ-ապուր	1540
Ընդամենը	**11550**
Խավարտ	
Տապակած սպանախ կրեմետտե պանրով և նուշով	2420
Հոսպերում պատրաստված սունկ	1420
Ջեռոցում պատրաստված կարտոֆիլ	1420
Գրիլ բանջարեղեն հոսպերում	1640
Շագանակագույն բրինձ	1100
Կարտոֆիլի խյուս	660
Ընդամենը	**8660**
Աղանդեր	
Փարիզ-Բրեստ մրգային	2640
Պրոֆիտրոլներ	2420
Ֆրամբուազիե	2200
Պավլովա	2860
Պավլովա Շոու	17160
Շոու շոկոմանների համար	20460
Ընդամենը	**47740**
Ալկոհոլ	
Օղի	
Գրեյ Գուս օրիգինալ 50մլ	3410
Օհանյան Այս 50մլ	1320
Արցախ ծիրանի 50մլ	1760

Օհանյան Այս 50մլ	1650
Ֆինլանդիյա 50մլ	1540
Աբսոլյուտ 50մլ	1540
Արցախ ծիրանի 50մլ	1760
Ընդամենը	**20020**
Կոնյակ	
Հեննեսի XO 50մլ	17050
Արարատ Շառլ Ազնավուր 50մլ	15400
Արարատ Դվին 50մլ	7700
Արարատ Ախթամար 50մլ	2750
Ընդամենը	**42900**
Գինի շիշ	
Կուր	10450
Կատարո	10450
Կարաս	8800
Վան Արդի	8250
Ընդամենը	**37950**
Շամպայն	
Կարաս էքստրա բրուտ	11000
Ընդամենը	**11000**
Գարեջուր	
Դարգեթ/Հեինիկեն/Կորոնա	1760
Ընդամենը	**1760**
Տաք ըմպելիքներ	
Թեյ ցիտրուսային/կոճ ապղպեղով 1լ	3300
Խոտաբույսերով թեյ	1320
Սուրճ ամերիկանո	1320
Արևելյան սուրճ	770
Ընդամենը	**6710**
Զովացուցիչ ըմպելիք	
Աղբյուրի/հանքային ջուր	550
Պեպսի	550
Բնական հյութ	770
Թարմ լիմոնադ 1լ	4950
Ընդամենը	**6820**

Ֆինլանդիա 50մլ	1320	
Ընդամենը	**7810**	
Կոնյակ		
Հեննեսի X.O. 50մլ	17050	
Արարատ Շառլ Ազնավուր 50մլ	15400	
Արարատ Դվին 50մլ	7700	
Արարատ Ախթամար 50մլ	2750	
Ընդամենը	**42900**	
Գինի		
Կատարո	10980	
Կուր	9350	
Հին Արենի	6930	
Կարաս		
Վան Արդի	8250	
Ընդամենը	**35510**	
Գարեջուր		
Դարգեթ/Հեինիկեն/Կորոնա 0.33լ	1760	
Ընդամենը	**1760**	
Տաք ըմպելիք		
Ամերիկանո	1210	
Սուրճ արևելյան	770	
Խոտաբույսերով թեյ	1320	
Ընդամենը	**3300**	
Զովացուցիչ ըմպելիք		
Աղբյուրի/հանքային ջուր	550	
Պեպսի	550	
Բնական հյութեր	770	
Ընդամենը	**1870**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Տ. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470063177280110
ՀՎՀՀ 01557735
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Եր.Քոչարի 27,բն.25
Գլխավոր տնօրեն՝ Դավիթ Երեմյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«19» 02 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-6	79111200/1	Ներկայացուց-չական ծախսեր /4237/	5000000	5000000	5000000	5000000	5000000	5000000	5000000	5000000	5000000	5000000	5000000	5000000	**5000000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Տ. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470063177280110
ՀՎՀՀ 01557735
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Եր.Քոչարի 27,բն.25
Գլխավոր տնօրեն՝ Դավիթ Երեմյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
« 19 » 02 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Պաշտոնական պատվիրակության ընդունելություն
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«19» 02 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն